# Վրացական թերթերն աջակցում են ՄեդիաՊալիտրային

Հունիս 14, 2011
Վրացական թերթերն աջակցում են ՄեդիաՊալիտրային
solidaroba.jpg [1]

Երկուշաբթի՝ հունիսի 13-ին, վրացական թերթերի մեծամասնությունը առաջին էջերին մեծ տառերով տպագրեցին «Միասնություն ՄեդիաՊալիտրայի հետ» նախադասությունը: Այս ակցիայով, որը կազմակերպել էր Լրատվամիջոցների շահերի պաշտպանության կոալիցիան, թերթերը պատասխանեցին ՄեդիաՊալիտրայում տեղի ունեցող հարկային ստուգումներին: Բողոքի ակցիային մասնակցեցին ինչպես մայրաքաղաքային և մարզային թերթերը, այնպես էլ մի շարք ամսագրեր:

Երկուշաբթի օրվա իր թողարկման առաջին էջին Կվիրիս Պալիտրա շաբաթաթերթը, որը պատկանում է ՄեդիաՊալիտրային, տպագրեց «Շնորհակալություն միասնության համար» տողը՝ բողոքի ակցիայի մասնակիցներին իր երախտիքը հայտնելու համար:

Կոալիցիան համոզված է, որ Հարկային ծառայությունների ստուգումները պայմանավորված են Պալիտրայի՝ մայիսի 26-ի ցույցի ցրման ժամանակ ոստիկանների բռնի գործողությունների քննադատական լուսաբանմամբ:

**Աղբյուր:** Media.ge **[2]**

## Թեմատիկ նյութեր

Գրիգոր Ամալյան. «Սարք ունենալ-չունենալը դիտեք որպես սեփական հայեցողություն, ոչ թե իրավունքի սահմանափակում» [3]
2012 թվականի ընթացքում ԼՂՀ-ի իրականացրած հետազոտությունները [4]
ԼՂՀ-ի ծրագիրը One World Social Innovation միջազգային մրցույթի լավագույնների շարքում [5]
Ditaket.am: Հաշմանդամ աղջկա երազանքն իրականություն դարձավ [6]
Irazek.am ընտրական ուղեցույցում քաղաքացիների հաղորդագրությունների վերլուծություն [7]

**Source URL:** http://www.jnews.am/node/1303

**Links:**
[1] http://www.jnews.am/files/solidaroba.jpg
[2] http://www.media.ge/en/node/41434
[3] http://www.jnews.am/interview-with-grigor-amalyan
[4] http://www.jnews.am/jff-studies-2012
[5] http://www.jnews.am/jff-project-on-one-world-social-innovation-award
[6] http://www.jnews.am/mane-asryan
[7] http://www.jnews.am/research-result-of-voters-complains-on-irazek